

Պե՛տք է դադրին մտակոյր խարխափումները:

Նոզ չէ, պահ մը մեր արեւի ակնոցները հանենք եւ գործածենք տեսողութեան ակնոցներ, ի հարկին խոշորացոյց ալ, որովհետեւ ինչ որ կ'ուզենք տեսնել՝ թանձր վարագոյրներու ետեւ պահուած թագուն հարց մըն է ցարդ: Ի՞նչու այս գաղտնապահութիւնը: Ի՞նչու Մելգոնեան Նաստատութեան ձախող հոգատարութեան իսկական պատճառները սխալ մեկնաբանութեամբ կը փորձեն արդարացնել իրենց յետին նպատակները իրագործելու համար: Երդուեալ բժիշկը պատասխանատու է իր հիւանդին առողջութեան:

Ուրեմն՝ խիստ դժուար, անշուշտ, բայց ո՛չ անկարելի, պե՛տք է ազատել Մելգոնեան Կրթական Նաստատութիւնը իր խաւարապաշտ խնամակալներէն: Վարագոյրը պէտք է վերցնել: Բացայայտ է որ ՀԲԸՄ-ի գլուխը գտնուող վարիչները՝ որոնք իրենք իրենց պաշտօնի կոչած են, այս մեծ միութիւնը ղեկավարելու ձեռնհասութիւնը չունին, իրենց մէջ չկայ ազգային միտքն ու ոգին, այլասիրած են եւ շրջապատուած անտարբեր հոգաբարձուներով՝ ամենուրեք: Ապացոյցները շատ են: Իրենք լուռ են՝ որովհետեւ յանցաւոր են, իրականութիւնը խոստովանելու դժուարութիւն ունին: Դրամի ուժով՝ կը գնեն կղերականներ, տնօրէններ, ուսուցիչներ, խմբագիրներ, փաստաբաններ եւ որոշ վարչականներ, որոնք չեն ուզեր հեռուն տեսնել, որովհետեւ դարձած են կարճատես եւ նիւթապաշտ: Իսկ՝ Մելգոնեանով մտահոգ ՀԲԸՄ-ի զանազան մարզի մէջ պաշտօնավարներ, չեն համարձակիր հրապարակաւ խօսիլ, կը վախնան որ պաշտօնանկ կ'ըլլան եթէ դէմ արտայայտուին ղեկավարներու որոշումներուն: Ցաւալի բայց իրաւ:

Ի՞նչպէս կեցնել փլուզումը մեր էութեան գոյատեւման խարխափներուն, երբ բոլորովին տարբեր նկատումներով մարդիկ ստանձնած են ազգանուէր միութեան մը ղեկը: Ազգապահպանումի ցուպը ձեռքերնին վաճառականութիւն կ'ընեն, կը քանդեն ու կը ծախեն ուրիշներ, իսկ ուրիշը՝ այլ խօսքով մեր հարազատները, կը դառնան թափառական: Ցուլարանը աւելի տաք կրակի վրայ կը դնեն: Ահաւասիկ այս նոր ճանապարհին առջեւ կը գտնուին մեր ուսումնատենջ գաւակները: Նակառակ որ Նայաստան աշխարհէն դուրս աւելի շատ հայեր կան քան թէ Նայաստանի հողին վրայ, կ'ուզեն ազգապահպանում ընել Նայաստանի մէջ եւ կու տալ Մելգոնեան կալուածներու հասոյթին 99%: Մտակոյր խարխափումներ որ մեզ պիտի առաջնորդեն դէպի անդունդ եւ ոչ թէ դէպի բարձունք:

Ի՞նչպէս ազատել մեր Սփիւռքի դեռահաս սերունդը, երբ ազգային երկրորդական հսկայ վարժարան մը՝ Մելգոնեանի նման, բայց եւ այնպէս աննման, մահուան կը դատապարտուի: Ուր՝ ազգային ոգիով կը նախապատրաստուի ապագայ հայ բժիշկը, փաստաբանը, գիտնականը, տնօրէնը, ուսուցիչը, առեւտրականը եւ այլ ազգային գործիչներ:

Մարդիկ՝ իրենց արօրեայ կեանքին մէջ մեղքեր կը գործեն, կամայ թէ ակամայ, եւ շաբաթավերջին, կիրակի առաւօտեան եկեղեցի կ'երթան եւ թողութիւն կը խնդրեն Աստուծմէ: Մելգոնեանը գոցելու գաղափարը աններելի մեղք մըն է, Աստուած պիտի չի՛ ներէ, իսկ հայ ազգին գաւակները ի՞նչպէս կրնան ներել երբ իրենք մահկանացուներ են:

Այս գնացքով շատ չանցած հայ ուսուցիչներ պիտի չգտնուին որոնք կարենան դասաւանդել հայ դպրոցներու մէջ հայոց լեզուն եւ հայոց պատմութիւնը: Լուծու՞մը: Նամեստօրէն՝ եթէ կ'ուզենք հայերէն լեզուն դասաւանդել, Սփիւռքի վարժարանները ստիպուած հայ ուսուցիչներ պէտք է ներածեն հայրենիքէն, որոնք՝ դժբախտաբար տակաւին թրծուած են սովետական նկարագրով: Թո՛ղ չըսեն թէ ի՛նչ տուած է Մելգոնեանը Սփիւռքին, մենք կ'ըսենք՝ Մելգոնեանը ոչ միայն Սփիւռքին այլ նաեւ մայր հայրենիքին տուած է իր հունձքէն, ուսուցիչներ, տնօրէններ, գրագէտներ, նկարիչներ, գիտնականներ, բժիշկներ, մասնագէտներ, հաշուապահներ, ճարտարապետներ, ուսեալ հայրեր ու մայրեր, ՀԲԸՄ-ի հաւատարիմ անդամներ եւ մանաւանդ անշահախնդիր անձեր՝ որոնք կը պայքարին իրենց «լուսոյ տաճարը» վառ պահել:

Կեցցե՛ն Մելգոնեանի հարազատ իշխան իշխանուհիները:

Ժ.Մ.